

ՊԱԶԱՎԻԱՔԻՍԸ ԽՈՂՄ
ԽԱՂԱՉ ԱՇԽԱՏԻՆՔԻ
ՅԵՎ ՊԱՇՏՈԱՍԽՈՒԹՅԱՆ
ՀԵՆԱՐԱՆՆԵ

Ա. Ն. ԲՈՅԿՈՎԻԿՈՎ

ԻՆՔՆԱԹԻՌԻ ԹՌՉՈՂ ՄՈԴԵԼԸ

ՊԵՏՐՈՎ

1 9 3 5

355.45

118 DEC 2017

Պաշտոնական հայության և պահպանի վեհականության
հետարքը է

Ա. Ն. ԲԱՍԿՈՎԻԿ

ԻՆՔՆԱԹԻՌԻ ԹՐՉՈՂ, ՄՈՒԵԼԸ

Զեռնարկ պատճի՝ սփիաշինարարների խմբակ-
ների նամակ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ 1934

ՅԵՐԵՒԱՆԵՐ

Այս գրքունիկը կարգալուց հետո պատասխանեցեք
ձեռնյալ հարցերին.

1. Ի՞նչպես եք ոգտագործել այս գրքույկն աշխատանքի ընթացքում և ինչ արդյունքներ եք ստացել:

2. Վերքան եք զուք լուրացրել այս գրքույկի թեման և ինչ թերություններ ունի այս գրքույկը:

3. Ի՞նչ է անհասկանալի ձեզ համար: Դրեցեք անհասկանալի բառերն ու դարձվածքները:

4. Հազորդեցեք ձեր մասին. ա) տարիքը, բ) քառամբ տարի և վհրացեղ եք սովորել, գ) ինչ աշխատանք եք կատարում ավիամոդելային խմբակում:

Նամակներն ուղարկեցեք հետեւալ հասցեյով:

Յերեվան, Արավան փող. Կառուցաղների ակոմիտ ՀՍԽՀ Հանրապետական Աերոակումբ:

Կենտրոնական ավիամոդելային լաբորատորիա:

Ա. Ն. Բասկակովի «Ինքնաթիռի թուչող մոդելը» բրոյալը մատչելի ձևով, առանց տեսական ցուցումներով ծանրալինելուու տալիս և թուչող մոդելների կառուցման մի շարք պարզ որինակներ:

Հեղինակի կողմից ոգտագործած նյութերն այն հարցերն են, զոր ամենից շատ են համապատասխանում ավիաշինարարության այն հիմունքներին, վորոնց տիրապետումն անհրաժեշտ և մեծ ավիացիայի հարցերի լուրացման համար:



1-327594

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարեցտարի աճում և ամրանում ե Խորհրդային Միության ողային տորմիդի հզորությունը: Լենինյան կուսակցության հսկայական ջանքերով ստեղծված Խորհրդային ողային տորմիդը հսկայական նշանակություն ե ստացել ինչպես պաշտպանության, այնպես ել սոցիալիստական շինարարության գործում:

Ավիացիան, —տեխնիկայի ամենաառաջավոր և բարձրագույն ձևերից մեկը, վորն ի սպաս և դրված առաջին հերթին սոցիալիստական շինարարությանը ձառայի լու և անհրաժեշտ չափով խորհրդային պաշտպանության գործն ամրացնելու համար, յերկրորդ հնգամյակում խոշոր զարգացում ե ստանում:

Ավիացիոն շինարարության բարձր տեխնիկան և հսկայական զարգացումը պահանջում են վոչ միայն աշխատավորների լերեք սերնդի սերն ու բազմակողմանի ոժանդակությունը, այլ և շատ տասնական և հազարավոր ավիացիոն կադրեր: Ոգային տորմիդի համար հարկավոր են շատ ուժուներ, ճարտարագետներ, կոնստրուկտորներ, ավիատեխնիկներ ու այլ մասնագետներ:

Մասսական ավիատեխնիկապագանդ մղելու
և ավիակադրեր պատրաստելու միջոցով ոդաշին
տորմիղի կառուցմանը ակտիվորեն ոգնող պա-
շավիաքիմի հասարակական աշխատանքի մեջ
ավիամոդելիզմը մասսայական աշխատանքի առա-
ջին և հիմնական աստիճանն է:

Այդ բնագավառում պատանի ավիաշնա-
րարների մեջ 10 տարվա ընթացքում մեծ աշ-
խատանք և ծավալված։ Մի քանի տասնյակ հա-
զար լեռեխաններ աշխատում են պաշտպահիմի
ավիամոդելային խմբակներում ու լարորատո-
րիաներում։ Ամեն տարի ավիամոդելային աշ-
խատանքի ստուգատեսներ և պատանի ավիաշի-
նարարների հավաքներ են անցկացվում։

Բայց այդ աշխատանքն իր չափերով դեռ
չի համապատասխանում այն մասսայականու-
թան պահանջներին, վոր անհրաժեշտ և յերկ-
րորդ հնդամյակի խնդիրները կատարելու մա-
սին կուսակցության վորոշումների տեսանկյու-
նից։ Այդ աշխատանքը պետք է շատ ափելի լայն
ծավալեր խորհրդակին ավիացիայի առաջ դրված
խնդիրների լուծման բոլոր անհրաժեշտ պայ-
մաններն ստեղծելու համար։

Թոշող մոդելներից իր կառուցվածքով ա-
մենահսարակն և ինքնաթիւով թոշող սխեմա-

տիկ մոդելը։ Հենց անունն ինքը վկայում է այն
մասին, վոր մոդելն ինքը վերաբարում է մեծ
ինքնաթիւով հիմնական ելեմենտների միայն սխե-
ման։ Ենք իրոք, սխեմատիկ մոդելի գլխավոր
մտաերը կլինեն հետեւալները. 1) թե՛ը, 2) պոչի
փետրավորումը (կայունացուցիչ — ստաբիլիզա-
տոր և վողնուց — կիլ), 3) ոդապտուակը (պրո-
պելլեր) պտտման համար իր ուստինե թելերով։

Այս բոլոր մասերն ամրացվում են մի ձողի
վրա, վոր փոխարինում և ֆյուզելյաժը։ Մենք
այստեղ չիշշատակեցինք շասսիի մասին (սայ-
լակ—վերաթռիչքի և վայրեջքի համար) այն
պատճառով, վոր ամենահսարակ սխեմատիկ մո-
դելներում մեծ մասամբ շասսի չի լինում, և այդ
ահսակի մոդելներն արձակում են ձեռքից։

Չնակած այն հանգամանքին, վոր սխեմա-
տիկ մոդելները միայն թռիչքի համար ան-
հրաժեշտ մասեր են ունենում, այնուամենայնիվ
այդ մոդելների տված արդյունքները շատ ավելի
բարձր են քան ուրիշ կառուցվածք ունեցող մո-
գելների արդյունքները։ Այդ բացատրվում է
նրանով, վոր սխեմատիկ մոդելները սովորաբար
մյուս մոդելներից շատ ավելի թեթև են լինում։
Դրա հետ սիամին պետք է ասել, վոր մոդելի քաշի
թեթևությունը թեկուզ գլխավոր գեր է խաղում,
բայց դեռ այն ամենը չի, ինչ վոր անհրաժեշտ

փորձելու ժամանակ լավ հետևանքներ ստանա-
լու համար:

Պետք ե ձգտել լավորակ աշխատանք ստա-
նալ թեից, պոչի փետրավորսւմից և ողապտու-
տակից: Մոդելի վորակը գլխավորապես կախված
ե մոդել պատրաստել կտրողանալուց: Մենք հի-
մա կանցնենք ադարքին – թռչող սխեմատիկ
մոդելի կառուցմանը:

Առաջինը, վոր մեզ պետք ե հետաքրքրի,
այդ այն ե, թե ինչով մենք պետք ե աշխա-
տենք, այսինքն ինչ գործիքներ և նկութեր են
անհրաժեշտ մեր աշխատանքի համար:

ԳՈՐԾԻՔՆԵՐ

Կարելի յե սահմանափակվել վորքը թվով
գործիքներով, այն ե՝ գրչահատ (դանակ), մըկ-
րատ, մի կտոր ապակի, թուղթ, փոքր ու մեծ
խարտոցներ և մի փոքր մուրճ: Սակայն պետք
ե նկատի ունենալ, վոր համապատասխան գոր-
ծիքների ընտրությունը վոչ միայն հեշտացնում
ե աշխատանքը, այլ և ապահովում ե նրա վո-
րակը: Ուստի ավելի լավ ե ունենալ հետևյալ
գործիքները,

1. Մկրատ.

2. Զեռնասղոց փայ-
տի համար.

3. Խարտոց փոքր.

4. Գրչահատ.
5. Բիզ.

6. Փոքր մուրճ

7. Կլորապուտնկ

աքցան.

10. Փոքր մամուլ:

8. Քանոն բաժանում-
ներով.

9. Ռանդա (ոռոքանոկ)

Գործիքների վերջին համարները (9, 10)
ցանկալի յե ունենալ, վորովհեակ դրանք հնա-
րավորության կտան ավելի շուտ պատրաստել
մոդելի վորոշ դետալները,

ՆՅՈՒԹԵՂԵՆ

Մեր մոդելի կառուցման համար այնպիսի
նյութեր են գործադրվում, վոր կարելի յե գլո-
նել մեր տնային տնտեսության մեջ, բացա-
ռությամբ մի քանիսի:

1. Չամի ձող (ուկյա) մինչև 1 մետր յեր-
կարությամբ և 10×25 մմ հատվածքով:

2. Լորենու, հաճարի կամ թղի չորսվակ
250 մմ յերկարությամբ և 25×20 մմ հատ-
վածքով:

Փայտը պետք ե չոր լինի, առանց վոստե-
րի և ավելի լավ ե, վոր ուղղահերտ լինի, փայ-
տի շեղակի շերտերը ցանկալի չեն:

3. Բամբուկի փայտիկ, յեթե բարակ ե (30
մ տրամագծով), ապա 1 մ յերկարությամբ:

Բամբուկը մեծ տրամագիծ ունենալու դեպքում,
կարելի յե ավելի կարճը վերցնել:

4. Սպիտակ թիթեղի (կոնսերվի բանկայի) մի կտոր կամ ավելի լավ և վերցնել թերթ աւտոմատ 0,5—0,8 մմ հաստությամբ:

5. Մի կոճ թել:

6. Պապիրոսի թուղթ=հինգ թերթ:

7. Հյուսնի սոսինձ—50 գրամ:

8. Պողպատե լար 30—50 սմ. 1 մմ արտագծով,

9. Ժապավինացու ռետին՝ 1×4 կամ 2×2 մմ հատվածքով (մոտավորապես 8 մ):

Ահա թոշող մողելի կառուցուան համար անհրաժեշտ բոլոր նյութերը:

Նախքան թոշող մողելի կառուցումն սկսելը, սահմանենք աշխատանքի կարգը:


1. Մողելի գծագրի հետ ծանոթանալը:

2. Դետալներ պատրաստելը (թե, պոչի փետրավորում, ողապտուտակ և այլն):

3. Մողելի հավաքումն ու կանոնավորումը:


ՏՈԴԵԼԻ ԳԾԱԳԻՐԸ

Գծագրի վրա պատկերացված ե սխեմատիկ մողելի ընդհանուր տեսքը յերեք պրոյեկտներով՝ հատակագիծը, տեսքն առջևից և տեսքը կողքից (նկ. 1).



ՍՊԵՇԱԼԻ ԿԱՌԱՋԱԿԱՆ

Ակտուալ նույնական	Նույնական	Զարգացման
1 Թել 2 Թել 3 Թել 4 Թել 5 Թել 6 Կամաց դեղուածքի ներդրում 7 Լուսի լուսն 8 Զբարարության սահմանական 9 Որոշակառ 10 Սկզբանական 11 Առջևի դիմուլա (պողովով) 12 Ցանկացած դիմուլ 13 Բառակամուտություն 14 Վողուաց (կիւլ) 15 Բառակամուտություն	1 Բամբուկ 2 Համարած ամերիկական 3 Համարած ամերիկական 4 Համարած ամերիկական 5 Համարած ամերիկական 6 Համարած ամերիկական 7 Համարած ամերիկական 8 Համարած ամերիկական 9 Համարած ամերիկական 10 Համարած ամերիկական 11 Համարած ամերիկական 12 Համարած ամերիկական 13 Համարած ամերիկական 14 Համարած ամերիկական 15 Համարած ամերիկական	1 Համարած ամերիկական 2 Համարած ամերիկական 3 Համարած ամերիկական 4 Համարած ամերիկական 5 Համարած ամերիկական 6 Համարած ամերիկական 7 Համարած ամերիկական 8 Համարած ամերիկական 9 Համարած ամերիկական 10 Համարած ամերիկական 11 Համարած ամերիկական 12 Համարած ամերիկական 13 Համարած ամերիկական 14 Համարած ամերիկական 15 Համարած ամերիկական




Մոգելը բնորոշող հիմնական չափերը կլինեն հետևյալը:

1. Տարածած թերթի ընդհանուր յեր՝ կարությունը (թափը) 750 մմ
2. Լայնությունը (ամենամեծ) 120 »
3. Չողի յերկարությունը 800 »
4. Ողապտուտակի տրամագիծը 240 «

Գծագրին կցված սպեցիֆիկացիայի համաձայն ծանոթանում ենք մոդելի առանձին մասերամասնությունների հետ։ Կառուցման համար ամենաբարդ մասերն են՝ թերթ, պոչի փետրավորումը և ողապտուտակը։ Պետք է հատկապես լավ նայել գծագրի վրա պատկերացված մատնանշված մանրամասնություններին։ Այդ մանրամասնությունների կառուցման համար անհրաժեշտ է շաբլոններ ունենալ, այսինքն այդ մանրամասնությունների գծագրերն իրենց բնական մեծությամբ։ Այդ շաբլոնների համաձայն կատարվում է մոդելի հավաքումը, այդ պատճառով ել շաբլոնները պետք են պատրաստել, վորքան հնարավոր են, խնամքով ու տուանց սխալների։ Շաբլոնների գծագրումը բավականին հասարակ աշխատանք են, դրա համար պետք են ունենալ հետևյալը. մի թերթ սաքուր թուղթ, սև մատիտ № 2, անկյունաչափ և քանոն բաժանմաներով։ Թերթ շաբլոնը գծագրվում է հետև-

յալ կարգով՝ մի ուղիղ գիծ են քաշում, և գծագրի համաձայն բաժանում մասերի, այդ մասերը վորոշում են թերթ ներվյուրների միջև յեղած հետավորությունը։ Դրանից հետո քանոնը դնում են այդ գծին զուգահեռ և անկյունաչափի միջոցով յուրաքանչյուր բաժանման գիմաց ուղղահալաց գծեր քաշում (նկ. 2): Այդ ուղղահայց գծերի վրա նշանակվում են ներվյուրների լարերը (լարագծերը) գծագրի համաձայն։



Նկ. 2

Որինակ՝ միջին գծի վրա նշանակվում է 120 մմ, սեղանից գեպի աջ ու ձախ, գծերից յուրաքանչյուրի վրա հերթով նշանակվում են 112—103—90—78 մմ։ Դրանից հետո նշանակված կետերը միացվում են կոր գծով, վոր գըծով են կամ ձեռքով, կամ ավելի լավ են լեկալի (կորաքանոնի) միջոցով։ Կարունացուցչի (ստաբիլիզատորի) շաբլոնը նույն յեղանակով են գըծագրվում, ինչպես և թերթ։ Վողնուցի (կիլի)

շաբլոնի համար կարելի յե ոգտագործել կայունացուցչի կեսերից սեկը, մի քիչ փոքրացնելով կլորացրած կողմը (տես նկ. 1): Դրանից հետո պետք ե գծագրել ներփյուրի շաբլոնն իր բնական մեծությամբ, այն չափերի համեմատ, զորքերված են նկար 4-ի վրա: Ներփյուրների աղեղնակի ուրվագիծը (կոնտուրը) գծվում ե լեկալի ողնությամբ:


Շաբլոնների գծագրումը վերջացնելուց հետո, սկսում ենք մանրամասնությունները պատրաստել: Սկսում ենք թևից և պոչի փետրագորումից:

Նախքան մողելի մանրամասնությունները պատրաստելը, պետք ե ծանոթանալ այն բամբուկի ընտրության և մշակման հետ, զորով պիտի աշխատենք:

Բամբուկի ընտրության ժամանակ պետք ե ուշագրություն դարձնել նրա ծնկերի միջև յեղած միջանցների (հեռավորությունների) վրա—վորքան ավելի մեծ են միջանցները, այնքան բամբուկն ավելի հարմար ե մողելի կառավարման համար (ամենալավ սիջանցն ե՝ 350—400 մմ) — և բամբուկի փայտի տրամագծի վրա (ամենամեծ գործածաւան չափն ե՝ 25-ից սինչե 75 մմ). Բամբուկը դորձագրվում ե վորպես նյութ մողելի գետալսերի համար, վորտեղ նրանց ձե-

վերի համեմատ կոր գծեր են պահանջվում (թի, պոչային փետրագորում):


Բամբուկն անհրաժեշտ է կոացնել թույլ կրակի վրա: Այդպիսի կրակի ամենալավ աղբյուրն ե՝ նավթի փոքր լամպը: Այդպիսի լամպի կառուցվածքը շափականց հասարակ ե, իսկ նրա կառուցման համար, վորպես նյութեր, գործադրվում են անպետք բաներ, այն ե՝ փոքրիկ դատարկ շիշ, մի փոքրիկ կտոր թիթեղ, խցան ու փոքրիկ պատրույդ: Նկար 3-ի վրա տրված ե այդպիսի լամպի նկարը:



Նկ. 3

Բամբուկը կոացնելու ժամանակ պատրույդը, վորքան հնարավոր ե, պետք ե լամպից

բարձր լինի, այս ժամանակ կռացնելն ավելի
հարմար կլինի Բամբուկի ծնկերն ամենաթուղթ



Նկ. 4.


տեղերն են, ուստի պետք ե' խռոսափել բամբուկը
հենց ծնկներում կռացնելուց, այլ աշխատել բամ-
բուկը կռացնել յերկու ծնկների միջև:

Ըստհանուր առմամբ բամբուկը պետք է
ջլատել նրա պատի ներսի կողմից, և վոչ թե
արտաքին - վողորկ կողմից, աղապես կարող են
վոչ ցանկալի ձեղքվածք պատահել: Դետալ պատ-
րաստելու համար բամբուկը սրվորաբար վերց-
նում են $1\frac{1}{2}$ անգամ ավելի, քան հարկավոր է:
Ճշգած բամբուկը պետք է ուղղել ծնկերը մաք-
րել խոշոր խարսոցով և հետո կռացնել, փորից
հետո անցնում են նրա ճշակմանը՝ գրչահատի
միջոցով, հատվածքը հարկավոր չափին հարմա-
րեցնելով: Ահա այս են հիմնական տվյալները
բամբուկի մշակման համար:

ԹԵՎ

Թեվի կմախքը բաղկացած է լոնֆերոններից
և ներվյուրներից: Լոնֆերոնը մի ձողան և
(պլանոչկա), վորի հատվածքն է՝ 3×2 մմ. Լոն-
ֆերոնների ողակաձև կլորացումները պատրաստ-
վում են $2 \times 1,5$ մմ հատվածքով: Սկզբում պատ-
րաստում ենք լոնֆերոնները: Լոնֆերոնը պատ-
րաստելու համար վերցնում ենք բամբուկը և,
նրանից յերկայնակի ձողաններ կտրելով, սկսում

Ենք այդ ձողանները լամպի վրա կռացնել շաբախինի համեմատ։ Լոնժերոնները պատրաստելուց հետո, զնում ենք շաբախի վրա, կողքերն ամրացնում կնոպկաներով և ստուգում, թե վորքան ճիշտ ե պատրաստած թերի կմախքը շաբախի համաձայն։ յեթե լոնժերոններն ըստ յերկարության հսարակոր չե պատրաստել մի ամբողջ կտորից, ապա կարելի յե յերկու կտոր միացնել։ Դրա համար անհրաժեշտ ե հետեւել, վորոնժերոնի մասերի միացումը ներփյուրների ամրացման տեղի դիմաց չընկնի։



Նկ. 5.

Բամբուկի կտորները միացնելու համար անհրաժեշտ ե միացվող բամբուկի յուրաքանչյուր ծայրը թեք տաշել 10-ական միլիմետր՝ կցանելու համար (նկ. 5)։ Միացումը կատարվում ե հյուսնի սոսնձի միջոցով, միացման տեղը թերվ փա-


թաթելով։ Միացնելուց հետո թելերը հեռացվում են։ Ծայրերի կլորացումներին հարկավոր ձեխանկյուն տալու համար անհրաժեշտ ե բամբուկի փալտիկը կռացնել գծազրի համաձայն (բամբուկը կռացնելու պրոցեսը բացատրված ե գերեզում)։ Թերի ծայրերի մասերը կռացնելուց հետո, պետք ե լոնժերոններով միացնել, ինչպես այդ նկարագրված եր վերևում։

1-ԵՇՏԵՐԸ

Այժմ մենք սկսում ենք ներփյարներ պատրաստելը։ Ներփյուրների համար պատրաստվելիք ձողանների հատվածքը լինում է 2×1 մմ։ Ամբողջ թեն ունի ինսը ներփյուր, վորոնց արամատները (պրոֆիլները) ցույց են տրված № 4 նկարի վրա, ներփյուրներ պատրաստելու ժամանակ բամբուկի փողորկ (փայլուն) մակերեսի վետք ե մաքրել ապակե թղթով, վորովինետե թերի յերեսին թուղթ քաշելու ժամանակ սոսինձը լավ չի կպչի բամբուկի փողորկ մակերեսույթին, ներփյուրները պետք ե զգուշությամբ կռացնել, շարունակ ստուգելով ներփյուրի շաբախի ողնությամբ։ Բոլոր ներփյուրները կռացնելուց հետո, սկսում ենք նրանց ամրացումը լոնժերոնների հետ։ Ներփյուրների ամրացումը լոնժերոններին կարելի յե կատարել յերկու յեղանակով։

Առաջին յականակությունը լոնժերոնների վրա

ներկվուրներն ամրացնելու տեղում դանակի սուր
ծայրով փոքրիկ ճեղքվածքներ են բացում։



Նկ. 6

Անհրաժեշտ է հետեւել, վոր լոնժերոնների վրայի ճեղքերը մեկը մյուսի դիմաց լինեն՝ ներկվուրների թեքվածքից խուսափելու համար։ Ներվլուրը ճեղքի մեջ դնելուց առաջ, նրա լուրաքանչյուրը ծայրը պետք է թեք տաշել (նկար 6)։ Դրանից հետո ներկյուրների ծայրերին սոսինձ են քսում և ճեղքի մեջ դնում։ Ամուր լինելու համար ներկյուրի և լոնժերոնի ամրացման տեղը կապում են խաչաձև թելով։

Յերկրորդ յեղանակ (ավելի բարդ). լոնժերոնների վրա ներկյուրներն ամրացնելու տեղի դիմաց պատրաստում են ներկյուրի հատվածքի համեմատ կտրուններ (նկ. 6). Դրա համապատասխան ներկյուրների ծայրերն ունեն փոք-

րիկ թիտկների ձևով գուրս յելնող մասեր (նկ. 6)։

Ներկյուրներն ամրացնելու համար սոսինձ քսած թիտկները գնում են կտրունների մեջ և ինչպես առաջին յեղանակի ժամանակ, ամրացնում են թելով։ Յերկու դեպքումն ել պետք են հետեւել, վոր լոնժերոնների վրա ներկյուրների ծայրերի գուրս ցցված մասեր չլինեն։ Դուրս ցցված մայրերը պետք են դանակով կտրել։

ԿԱՅՈՒՆԱՑՈՒՑԻՉ

Կայունացուցիչը (ստարիլիզատոր) պատրաստվում է նույն յեղանակով, ինչ վոր թելը կայունացուցչի ողանները 3×2 մմ հատվածք ունեն։ Կայունացուցչի համար պատրաստում են ուղիղ ներկյուրներ։ Ըստ վորում կայունացուցիչը ձողին ասրացնելու համար, միջին ներկյուրը յուրաքանչյուր կողմից պիտի ունենա 25-ական միլիմետր դուրս ցցվող մասեր, հաշվելով լոնժերոններից։ Վողնուցի (կլլի) շրջանակը պատրաստվում է շաբլոնի համեմատ, ձողանի յերկարությունը պետք է այնքան լինի, վոր, տմբողջ շրջանակը կուացնելուց հետո, յերկու ծայր մնան (նկ. 1), յուրաքանչյուրը 20-ական մմ յերկարությամբ։ Այդ ծայրերը միացվում են իրար հետ սոսնձի միջոցով և ծառայում են

վողնուցը մոտորային ձողին ամրացնելու համար:


Թևերի յերես քաշելն սկսելուց առաջ, պետք է լոնժերոնները պատրաստել V տառի ձեռվ (տես նկ. 1). այդ անհրաժեշտ է թռիչքի ժամանակ մոդելին ավելի մեծ կայունություն տալու համար: Դրա համար լոնժերոնները մեջտեղում մի փիշ կուացվում են կրակի վրա: Հետո անհրաժեշտ է պատրաստել մետաղե դիմկալները (պոդկոսները) թևերը ձողին ամրացնելու համար: Մոդելի թևը թռիչքի գծի ուղղությամբ ունի մոտավորապես 3° թեքության անկյուն դրա համապատասխան դիմկալներից մեկն ավելի մեծ են պատրաստում, իսկ մյուսը՝ ավելի փոքր:

ԴԻՄԿԱԼՆԵՐ

Դիմկալները (պոդկոսներ) պատրաստվում են թերթ ալյումինից կամ թիթեղից 0,8—1 մմ հաստությամբ և բաղկացած են անրիկից ու բեխիկներից: Դիմկալները պատրաստելու համար մետաղե թերթի վրա գծում են լերկու դիմկալի ձեվածքը այն չափերով, վոր ցույց են տրված № 7 նկարի վրա:

Ձևվածքը կարում են մկրատով: Ձևվածքին հարկավոր ձևը տալու համար, պետք ե այն

կուացնել կետազծերի համեմատ, ինչպես ցույց ե տրված № 7 նկարի վրա: Կուացնելու ժամանակ անհրաժեշտ է դեկավարվել № 7 նկարի վրա ցույց տրված դիմկալների ընդհանուր տեսքով:



Նկ. 7

Դիմկալներն ամրացվում են թևին սոսնձով և հետո փաթաթում են թերթի: Այդ դեպքում

պետք ե հետևել, վոր բեխիկն ու անրիկը միացնող ձողիկները մեծ արանք (զազոր) շունենան, ալլապես անըիկը բավականին կիսլ չի ընդգրկի ձողը:

ԹԵՎԻՆ ՅԵՐԵՍ ՔԱՇԵԼԸ

Թել, կայունացուցիչը և վողնուցը հավաքելուց հետո, կարելի յե սկսել նրանց յերես քաշելու աշխատանքը: Յերես քաշելու համար պետք ե պապիրոսի լավ թուղթ վերցնել (սպիտակ կամ գունավոր): Թղթի յերես պետք ե քաշել միայն վերեից: Յերես քաշելու աշխատանքը կատարում են հետեյալ կարգով: պետք ե մի կտոր թուղթ կտրել, վորնիր չափով պետք ե մի քիչ ափելի մեծ լինի, քան թերի մակերեսիցից: Թուղթը կպցնելը պետք և մաս-մաս կատարել որինակ՝ սկզբում աջ կողմը, հետո՝ ձախ:

Թուղթը կպցնելու համար թերի շրջանակի (յերկու կեսից մեկի) վերեի մասին հրուսնի սոսինձ են քսում: Հետո այստեղ ել, թուղթը չտառվ վոր սոսինձը չորանա, թուղթը միջին ներվյուրի վրա յեն դնում և դգուշաբար ձգում գեպի թերի ծալը, հարթելով, վոր վոթ չընկնի: Նույն ձեռվ թուղթ են քաշում նաև յերկրորդ

կեսի վրա: Թուղթը բավականաչափ չոքանալուց հետո, ավելորդ լեզրերը խուզում են բեխիկների համեմատ: Կայունացուցչին և վողնուցին թուղթ են քաշում նույն լեզանակով, ըստ վորում վողնուցին թուղթ են քաշում յերկու կողմից:

Ո Դ Ա Պ Տ Ո Ւ Տ Ա Կ

Մոդելի ամենադժվար պատրաստվելիք զետալը ողապտուտակն ե: Մրա պատրաստելը տոկունություն և ուշադրություն ե պահանջում: Ողապտուտակ պատրաստելու համար պետք ե վերցնել մի կտոր փափա 240 մմ յերկարությամբ և 24×15 մմ հատվածքով: Ողապտուտակի համար փալար կարելի յե վերցնել հետեյալ տեսակներից մեկը՝ լորենի, թխկի, լաստենի և վողորենի (բերյոզա): Փալար պետք ե լինի ուղղաշերտ և առանց վոստերի: Հարկավոր չափերի փայտի կտորը (չորսվակը) պատրաստելուց հետո, նրա վրա մատիտով գծում ենք պտուտակի ձևվածքը (նկ. 8), վարի համար չորսվակի լայն կողմի վրա անկյունից մի անկյունագիծ ենք քաշում: Հետո չորսվակը, ըստ յերկարության յերեք մասի յենք բաժանում, յուրաքանչյուրն 80-ական միլիմետր: Միջին մասը

բաժանում ենք յերկու հավասար մասի, մատիտով մի ուղիղ գիծ քաշելով, վոր միայնում ե չորսվակի յեզրերը. Այդ ուղիղ գծի և անկյունագծի իրար համան կետը կլինի ողապտուտակի ականոցի (վտուլիս) կենտրոնը. Այժմ ականոցի գծած կենտրոնում 1 մմ տրամագիծ ունեցող մի ծակ են բացում: Դրանից հետո ողապտուտակի ձևվածքը վերջացնում են, անցկացնելով կոնտրւրային գծերը նկար № 8-ի համաձայն: Ողապտուտակի կոնտրւրը վերջացնելուց հետո, պետք է կամ սղոցել չորսվակի այն մասը, որը նկարի վրա ծածկված է գծիկներով: Ողապտուտակի մշակման աստիճանական ընթացքը ցույց է տրված նկար 8-ի վրա: Ողապտուտակի թաթերը կոպիտ կերպով պատրաստելուց հետո, հետագա մշակումը կատարվում է ապակու կտորով կամ ապակե թղթով:


Ողապտուտակի թաթերը դրսի կողմից պետք մի քիչ ուսուցիկ լինեն, իսկ ներսի կողմից՝ մի քիչ գոգավոր: Ողապտուտակի մշակման ժամանակ պետք է հետեւ, վոր թաթերի հաստությունը ականցի մոտ 2—2,5 մմ լինի, իսկ ծայրերի մոտ՝ 1—0,8 մմ: Հետո պետք է ստուգել թաթերի համաչափությունը, վորպեսզի նրանցից մեկը մոռւսից ավելի կարճ չլինի: Դրա համար թաթերից մեկի կոնտրւրը գծվում է թղթի

վրա, և դրանով ստուգվում է մրուս թաթը: Վերջնական մշակումից հետո պետք է ստուգել, թե ողապտուտակի թաթերն արդյոք իրար հավասար են իրենց քաշով: Այդ կատարվում է հետեւյալ ձեռվ: ողապտուտակը հագցնում են մետաղալարից պատրաստած սոնակին, իսկ մետաղալարի ծայրերը հենում են մի վորեե բանի (նկ. 8): Դրանից հետո ողապտուտակը թույլ պտտում են: Հավասարակշռված պտուտակը պետք է կանգ առնի հորիզոնական գրությամբ: Յերբ ողապտուտակը հավասարակշռված և վերջնականագես մաքրված է, այսինքն թաթերի մակերեսույթները կոկած են, այն ժամանակ ողապտուտակ պատրաստելու աշխատանքը վերջացված է համարվում: Այժմ մնում է ողապտուտակի վրա ամրացնել պտտման սոնակը: Պտտակի սոնակը պատրաստվում է պողպատե լարից 1 մմ տրամագծով և 55 մմ լեռկարությամբ: Սոնակն ականոցի մեջ մտցնելուց հետո, սոնակի մի ծայրը կուպացնում են, ինչպես ցույց է տրված նկ. 8-ի վրա, և այդ կուպացրած ծայրը խփում մտցնում են ողապտուտակի միջին մասի մեջ:

Անցնում ենք մեր մոդելի կմախքի պատրաստանը, վորի համար հարկավոր է փայտե ձող (ոելկա): Ձողը պատրաստվում է շամի փայ-

տից: Զողի համար պետք է լավ և առանց թերությունների փայտ վերցնել:

Զողի հատվածքը 6×9 մմ պիտի լինի: Ավելի լավ են ձողն իր հատվածքի նկատմամբ մի քիչ ավելի մեծը վերցնել, քան մի ամբողջ տախտակից կարեր Սվելի մեծ հատվածք ունեցող ձող վերցնելու դեպքում, նրա մշակումը մինչև հարկավոր հատվածք ստանալը մեծ դրժվարություն չի ներկայացնում, և աշխատանքը կարելի յէ կատարել ունդայով, իսկ հետո ապակե թղթով մտքրելու միջոցով: Զողի պոչի մասի ծացրին թեք կտրվածքը եւ պատրաստվում նկ. 6 վրա բերված չափերով:




նկ. 9

ՍԴՆԱԿԱԼԸ



Ողապտուտակի սոնակալը պատրաստվում է $0,8-1$ մմ հաստություն ունեցող թերթ ալյու-

մինից կամ թիթեղից: Սոնակալի ձեածքը ցույց ե արգած նկ. 10-ի վրա: Սոնակալի պատրաստման յեղանակը նույնն է, ինչ վոր թեք դիմկալները պատրաստելու յեղանակը: Սոնակալը ձողի վրա ավելի լավ ամրացնելու համար, պետք ե ձողի ծացրին, սոնակի յերկարության համեմատ, յուրաքանչյուր կողմից 1-ական մմ կտրել հանել, ստանալով ձողի հատվածքը 8×5 մմ: Սոնակալը ձողին հազցնելուց հետո, պետք ե նրա կողերը մի քիչ ծեծել՝ տեղը կիզ նստեցնելու համար: Սոնակալը յերկու կողմից պետք ե ձողին ամրացնել փոքրիկ մեխերով, զորպեսզի նա տեղից դուրս չգա:






նկ. 10

միետինամուտորն ամրացնելու համար ձողի-



Հայոց բանական մասեր



պոչի մասի վրա սարքում են մի կեռիկ՝ 1 մմ
տրամագիծ ունեցող կոր սետաղալարից, կեռիկն
ամրացնելու յեղանակն ու նրա չափերը ցույց
են տրված նկ. 9 վրա:

Կերջին աշխատանքը ուետինամուռը պատ-
րաստելն է: Մոդելի ողապտուտակի պտտման
համար վերցնում ենք ժապավենաձև ուետինե
2×2 մմ կամ 1×4 մմ հատվածքով: Մեր մո-
դելի համար նորմալ կլինի ուետինի յոթ թել
վերցնել, յուրաքանչյուրը 850 մմ յերկարու-
թյունը: Մեզ անհրաժեշտ է, վոր բոլոր թելերը
միատեսակ աշխատեն, ալսինքն, վոր թելերի
փունջն իրենից մի ամբողջ թելի նմանություն
ունենա. զրա համար թելերի ծարերը կապում
են մերքի ձեռք. մի ձայն ամրացվում է ողա-
պտուտակի սոնակին, իսկ մյուսը յետեի կեռի-
կին:

Ծայրերի մերքերի կառուցվածքը ցույց է
տրված նկ. 9-ի վրա: Ուետինի պտտման ժամա-
նակ սուրբերը մաշելուց պաշտպանելու համար,
մերքերը փաթաթում են բաղրաւշով կամ մի
կտոր բարակ գործվածքով և թելով կապում:

ՄՈԴԵԼԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Մոդելի վերջնական հավաքման համար բո-
լոր անհրաժեշտ մանրամասնությունները մենք

արդեն պատրաստել ենք: Այժմ մնում է ձողի
վրա ամրացնել՝ ողապտուտակը, կարունացու-
ցիշը (ստաբիլիզատոր), վողնուկը (կիլ), ուետի-
նամուռը կախել և հետո թեն ամրացնել Մո-
դելի հավաքման կարգը, վոր պետք է միշտ
պահպանել, հետևյալն է.


1. Կայունանուցի և վողնուցի ամրացումը
մուռը մուռին ձողին, Ողապտուտակի տեղակայումը
և ուետինամուռի կախումը:

2. Մոդելի հավասարակշռումը և ծանրու-
թյան կենտրոնը գտնելը:

3. Թեսի ամրացումը ծանրության կենտրո-
նի կետում և ողապտուտակի ու ուետինամուռի
վերջնական տեղակայումը:

Հավաքման սկզբում մուռը յին ձողին վերջ-
նականապես ամրացվում են միմիայն կայունա-
ցուցիչն ու վողնուցը: Ողապտուտակի սոնակալը
հագցվում է ձողին, առանց մեխերով ամրաց-
նելու, վորովինեան ծանրության կենտրոնը գրա-
նելուց հետո, թելը պիտի ձողին հազցի սոնա-
կալի ամրացման աեղի վրայով: Ձողի վրա
կայունացուցիչն ու վողնուցն ամրացվում են
թելերի միջոց վ. ամրացման տեղը ցույց է
տրված 11 նկարի վրա: Սկզբում ամրացնում են
կայունացուցի յետեի դուրս ցցված ձողիկը,
(ներվյուրի), հետո կայունացուցչի առջևի ձո-

դիկը և վողնուցի դուրս ցցված մասը միաժամանակ կապում են ձողին։ Ողապտուտակը սրոնակալի վրա տեղակայելուց առաջ, թիթեղից կտրում ենք յերկու բոլորակ (տափողակ), նրանց



Նկ. 11

մեջ նախապես ծակեր բանալով, ողապտուտակի սոնակի տրամադիր համեմատ։ Այդ տափողակներն անհրաժեշտ են ողապտուտակի տկանոցի և սոնակալի շփումը նվազեցնելու համար։ Ուստի տափողակները պատրաստելու ժամանակ նրանք պետք են միանդամայն կոկ լինեն և յեղբերի վրա քեծեր չունենան։

Ողապտուտակի սոնակին տափողակներ հագըլնելիս, վերջիններս կիպ մոտեցնում ենք ականոցին։ Դրանից հետո պատրակի սոնակն անց

ենք կացնում սոնակալի սիջով և սոնակի ծալը կուցնում կեռիկի ձևով։

Հետո սոնակալը պտուտակի հետ միասին ժամանակավորապես հագցնում են մոտորային ձողին և կախում ուետինամոտորը։

Մանրության կենտրոնը վորոշելու համար, ձողը (նրա վրա ամրացրած՝ կայունացրէի, վողնուցի, պտուտակի և ուետինամոտորի հետ միասին) տեղակայում ենք դանակի սուր ծայրին, և դրա վրա ձողն առաջ ու յետ տեղափոխելով, գտնում այն տեղը, վորտեղ մողելի յերկու ծայրն ել հավասարակշռության մեջ են գտնվում։ Ձողի վրա ծանրության կենտրոնի տեղը նշանակում ենք մատիտով։

Այսպիսով ծանրության կենտրոնը վորոշելուց հետո, սկսում ենք ձողի վրա թևն ամրացնելու գործը։ Թևի դիմկալները հագցնում ենք ձողի առջևի մասից։ Դրա համար նախ պետք է հանել սոնակալը պտուտակի հետ միասին, իսկ հետո ձողն անցկացնել թևի անրիկների սիջով։

Թևը ձողին ամրացվում ե այնպես, վորացնելի լոնժերոնը մողելի ծանրության կենտրոնից գտնվի թեփլայնության մոտավորապես մի յերրորդ հեռավորության վրա։

Թևը տեղակայելուց հետո, դիմկալներն ամ-

բացնում ենք ձողին ոետինե ողակների միջոցով, վոր պատրաստում ենք ոետինի մնացած կտորներից: Դրանից հետո սոնակալը նորից ենք հաղցնում ձողին և վերջնականապես ամրացնում ձողին՝ յերկու փոքրիկ մեխերով:

Ամբողջ մողելը հավաքելուց և թոփչքի համար պատրաստելուց հետո, սկսում ենք մողելի կանոնավորումը և առաջին փորձնական թոփչները: Այստեղ մենք բերում ենք մեր մողելի առանձին մասերի քաշերը.

Թեր	17	կգ
Կայունացուցիչը	4	»
Վողնուցը	2	»
Պտուտակն իր սոնակալով	9	»
Զողը շամի	16	»
Ռետինամոտորը	24	»
Թոչքաքաշն ե	72	կգ

ՄՈԴԵԼԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Կանոնավորումը բարդ աշխատանք է, և, առանց մողելը կանոնավորելու հմտության, լավ հետևանքների համել չե կարելի: Կանոնավորման հստությունը կարելի յե ձեռք բերել փորձառության և թեորիան իմանալու միջոցով:

Այստեղ մենք առաջին միմիայն ամենահիմնական կանոնները:

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Մողելը թոփչքի համար պատրաստ ե միայն այն ժամանակ, իերբ թերն ու կայունացուցիչը յերկու կողմից ել հավասար են տեղակայված և թերքած չեն: Թոփչից առաջ խնամով սուզիր այլ:

ՅԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՆՈՆ

Ստորգիր ոգապտուտակը. արդյոք նա չեխփում, ճիշտ և հագցված սոնակին, արդյոք սոնտակը ծոված չե. ուղղիր այդ:

ՅԵՐՐՈՐԴԻ ԿԱՆՈՆ

Կանոնավորումն սկսվում է սավառնելու համար բաց թողնելուց: Դրա համար մողելն աջ ձեռքդ վերցըրու մոտորալին ձողի մեջ տեղից բռնած, և աչքիդ բարձրության վրա ձողը պահելով համարյա հորիզոնական դրությամբ, միքից թեքելով դեպի ցած, ձեռքի սահուն, ազատ շարժումով հրի այն:

Կանոնավորված մողելը պետք ե թեք զծով սահուն կերպով գետնի վրա իջնի կամ, ինչպես ասում են «սավառնի»: Սավառնելու համար բաց

Թողնելու ժամանակ մոտորը չեն լարում:

Ստուգիր 2—3 անգամ. յեթե պարզվի, վոր մոդելն ընկնում ե քիթը ցած ուղղած, ապա պետք ե թերը 5—7 միլիմետր առաջ տեղափոխել և նորից բաց թողնել. յեթե մոդելը նորից քիթը ցած ընկնի, ապա թերն ելի դեպի առաջ տեղափոխի. այդ պետք ե քիչ-քիչ անել, մինչև վոր մոդելը կանոնավոր թոշի (նկ. 12):


Իսկ յեթե մոդելը միանգամից դեպի վեր ե բարձրանում, թեր պետք ե դեպի յետ քաշել. այդ պետք ե անել (աւսինքն թեր դեպի յետ տեղափոխել), մինչև վոր մոդելը սահուն և ստափանող վայրեջք կատարի (նկ. 12):

ԶՈՐՈՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Մոդելը սավառնելու համար կանոնավորելուց հետո, մի քիչ պտտեցրու ուժինամոտորը, մոտ 40—50 պտույտ անելով, և այդպես բաց թող մոդելը:

Մոդելը պետք ե բաց թողնել այսպես. ձախ ձեռքով բռնիր ողապտուտակի թաթի մի ծայրից, իսկ աջ ձեռքով՝ սոտորային ձողի մեջտեղից: Սկզբում բաց թող ձախ ձեռքը և հենց դրանով ել թույլ տուր վոր ողապտուտակը պտտվի, իսկ հետո աջ ձեռքի թեթև հրումով մոդելը բաց թող թռչելու (տես նկ. 12) (Յ. րդ կանոն):

Լավ կանոնավորված մոդելը կթռչի հորիզոնական ուղղությամբ (կամ մի քիչ դեպի վեր) և հետո, յերբ լարումը կանգ կառնի, կսկսի սավառնել այնպես, ինչպես առաջ: Աստիճանաբար ավելացնելով ուժինամոտորի լարումը, կտրելի յե ավելի և ավելի լավ հետևանքների հասնել:



Նկ. 12

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ


Կարող ե պատահել, վոր մոդելը լավ թռչի, բայց շատ պտտվի, դառնալով դեպի աջ կամ ձախ: Ամենից հաճախ այդ լինում ե այն պատճառով, վոր թերը թեքված են լինում: Յեթե մոդելը դեպի ձախ ե դառնում, ապա այդ հետևանք ե թերի այնպիսի թեքվածքի, վորի ժամանակ աջ թերի յետերի լոնժերոնն իջեցված ե լինում, իսկ ձախը քիչ բարձրացված:

Պետք է թեփերը հավասարեցնել: Դրա համար աջ թերի յետինի լոնժերոնը պետք է մի քիչ բարձրացնել, իսկ ձախ լոնժերոնն իջեցնել: Դեպի աջ դարձման ժամանակ ձախ թերի մի լոնժերոնն իջեցված ե և աջ լոնժերոնն քիչ բարձրացված: Աւղիր այլ: Թույլ դարձումների ժամանակ թերը սովորաբար հավասար են լինում, և այս զեպքում գործում ե վողնուցի «ծովածությունը»: Աւղիր այն, ուղիղ բռիչ կսանա:

ՄՈԴԵԼԻ ՎԵՐ ԹՈՅՆԵԼԸ

Ցերը կանոնավորումը բարեհաջող կերպով գերջացրած ե, և մողելն առաջին փորձնական թոփշքների ժամանակ բավարար հետեանքներ ե ցուցաբերում, անցնում ենք նրա վեր թոցնելուն լրիվ լարման միջոցով: Թոփշքից առաջ ուղինամոտորը պետք ե յաւղել գլիցերինով: Այն ժամանակ ուղինի առաջձին թելերը և ավելի մեծ առաձգականություն են ստանում, և մեկը մյուսի տակից ավելի լավ են սահում: Ուետինի չոր թելերի շփումը ուղինամոտորի կտրվելու առաջին պատճառն ե, վոր յերբեմն տեղի լեռնենում նույնիսկ փոքր քանակով պտութների ժամանակ: Գլիցերինը հասարյա ամբողջովին

վերացնում ե այդպիսի դեպքերը: Գլիցերինով յուղած ուղինամոտորն ավելի շատ պտույտներ ե տալիս, ուստի թոփշքից առաջ մենք հանձնարարում ենք ուղինամոտորը հանել մողելից, ձեռքի ափի մեջ թեյլ կես գդալ գլիցերին ածել և ուղինը յուղել: Գլիցերինով յուղած ուղինամոտորի մի ծայրն կանթը (մերքը) հազցվում



Նկ. 13

և ողապտուտակի սոնակի կեռիկին, իսկ ուղինամոտորի մլուս ծայրի մերքը բռնած պահում ե ձեր ընկերներից մեկը: Այդ գեպքում ուղինը պետք ե ձգել նրա բնական յերկարությունից մոտավորապես մեկուկես անգամ ավելի, և ողապտուտակը պտտեցնել, մոտավորապես 600—700

պառւյա կատարելով: Ողապտուտակը պատեցնելու ժամանակ ուստինամուրի թելերը կծածկվեն մի շարք վոլորներով, իսկ ուստինի մլուս ծայրը բռնող ընկերը (նկ. 13) կամաց-կամաց մոտենում է մոդելին և գդուշաբար հագնում վորուած ուստինի փնջի մերքը մոտորային ձողիկի յետնի կեռիկին. դրանից հետո սկսում են մոդելը բաց թողնել (մոդել բաց թողնելը բացարկած ե 4-րդ կանոնում): Լավ կառուցած և կանոնավորած մոդելը պետք է 300—350 մ թոշի, 50—60 վայրկյան թոփչքի տեսողությամբ:

ՄԵՐ ԽՈՐՀՈՒԲԴՆԵՐՆ ՍԿՈՆԱԿ ՄՈԴԵԼԻ ՍՏՆԵՐԻՆ

1. Նախքան մոդելի կառուցումն սկսելը, լավ ուսումնասիրիր այն մոդելի գծագրերը, վորպիտի կառուցեաւ:

2. Աշխատիր ճշտապահորեն, առանց շտապերու առաջին անհաջողության դեպքում, աշխատունքը չթողնես, այլ անհաջողության պատճառը պարզեց և այն վերացնելուց հետո, աշխատիր ցանկալի արդյունքների հասնել:


3. Աշխատիր միայն սուր գործիքով:

4. Խորացրու քո գիտելիքները, պրակտիկան աշխացրու թեորիայով, իսկ թեորիան ստուգիր պրակտիկայով:

5. Յեթե աշխատանքի ընթացքում վորեն գժվարության հանդիպես, մի տիրիր, քեզ կարող ե ոգնություն հաղցնել ՀՍԽՀ Հանրապետական Այերուակումբի ավիամոդելային կենտրոնական լաբորատորիան, վորն ավիոմոդելիզմի բոլոր հարցերի վերաբերմամբ հեռակա կոնսուլտացիա յե տալիս:

Հասցեն. Յերեվան, Արովյան փող. կառուցողների ակումբ. ՀՍԽՀ Հանրապետական Այերուակումբի Ավիամոդելային կենտրոնական լաբորատորիա:

Երևան, ս. Աբովյան պող. կառուցողների ակումբ. ՀՍԽՀ Հանրապետական Այերուակումբի Ավիամոդելային կենտրոնական լաբորատորիա:



ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱԿԱԳՐԵՐԸ

- Նկ. 2. Ось крыла—թևի առանցքը
- Նկ. 4. Шаблоны нервюров крыла—թևի ներփակի շաբլոնները
- Նկ. 5. Обмотка нитками—թելով փաթաթվածքը
- Նկ. 6. Первый способ—առաջին յեղանակ
Второй способ—յերկրորդ յեղանակ
Нервюры—ներփառըներ
- Նկ. 7. Подкос крыла—թևի դիմկալը
развертка переднего подкоса—առջևի դիմկալի ձևածքը
развертка заднего подкоса—յետնի դիմկալի ձևածքը
- Նկ. 8. Место просверливания дыры—ծակը բանալու տեղը
- Նկ. 9. Рейка сечен. 6×9 мм—ձող 6×9 մմ
нитки с клеем—թելեր սոսնձով
резиномотор—ուտինամոտոր
Костыль-крючок—դամկելովիկ

Նկ. 10. Подшипник—սոնակալ
развертка—ձևածք

Նկ. 11. Киль—վողնուց
стабилизатор—կայունացուցիչ

Նկ. 12. Неправильно—ճիշտ չե
правильно—ճիշտ ե

Պատճ. խմբ.՝ Ա. Հայրլան
Լոզվական խմբ.՝ Ա. Առատամյան
Տեխ. խմբ.՝ Գ. Զենյան
Սրբագրիչ, Ո. Դաստիարակության

Գատվել 1171, Գլուխ. 8602, Հրատ. 3035, Տիրաժ 2000:

ՀՀ Ազգային գրադարան

NL0977226

ԳԻԱԸ 40 ԿՈՄ.

3275



А. Н. Баскаков

Летающая модель
самолета

Гиз ССР Армении, Эреванъ.